

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԵՆՈՒՆԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՎ ՏՈՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար Տարեկան 12 փր.
» » Վեցամսեայ 6 փր.
Արասանկանի համար (երկու քիւղ մեկ
ժուրնով) Տարեկան 14, վեցամսեայ 7 փր.
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐԵԼԻ

Նախակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎԱՌՆԱ (Պուլկարիա)

Редация на ВѢСТНИКЪ

„Ирaвyнкъ“

ВАРНА (България)

Rédaction du journal

„Ira vounk“

V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ:
Իրանցիական տղր 20 սանթիմ. երե-
փեկ աւելի անգամներու համար 20 0/0
զեղչ կը լինի:

ԿԸ ԽՆԴՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ, Ռուսմանիոյ և Ե-
գիպտոսի այլեւայլ քաղաքաց մէջ
գոնուող մեր յարգոյ բարեկամ-
ներէն ու գործակատարներէն որ
հաճին անյապաղ դրկել մեզ իրենց
քով հաւաքուած գրութիւնները, և
փութացնել բաժնեկցոնց գանձումն
նկատելով թէ երկու ամիս միայն
մնացած է «Իրաւունք»ի ներկայ
տարեշրջանի լրանալուն:

ԹՂԹԱՎՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՔԱՆՈՒՄ

Սօֆիա, 15 հոկտ.

Արդէն համառօտակի գրած էի
որ անցեալ շաբաթ օր կէսօրին
քաղաքիս ոստիկանութիւնը ձեռ-
բակալեց Յարութիւն Զիւմրուտ
հայը և երկու տաճիկ, չէյն Սուս-
թաֆա և Քեհամիլ պէյ ու կիւրու-
կէ առաւօտ ալ հեռացուց քաղա-
քէս ոստիկանութեան հսկողու-
թեան ներքեւ: Այսօր ալ կը գրեմ
սոյն փաստուններուն նկատմամբ
առած տեղեկութիւններս ու լսած-
ներս:

Պ. Յ. Զիւմրուտ, որ տեղս ծա-
նօթ է աւելի սարք անուամբ,
րինկ Պոլսեցի փաստաբան, վեր-
ջին գաղթականներէն է, կ'ապրէր
այլ եւ այլ գործերով, մասնաւորա-
պէս տաճիկներէն խմբագրելով և
թարգմանութիւններով: Նախորդ-
Պոլսաբար աշխատի սիրած էր զինք,
որ մինչեւ իսկ տեղւոյս օսման-
եան դրամատուն մէջ տաճիկ ոսկիի
գործ մը բանալ խոստացած էր ա-
նոր, որ ուղարկէր պէս շահագործէ
(Երեւելի այս գործին նկատմամբ
«չըլիկին» իւր Ֆիլիպէի թղթա-
կից բարեկամին տուած սխալ տե-
ղեկութեան վրայ էր, որ վերջինս
ս'ը անցեալ տարի «Շարժում»ի
«էլ Լաթիֆ» անուանած էր «սարքն»):

Արդէն գոմիւսը, Մէլհամէ էֆ.
հազիւ հաստատուած իւր պաշտօ-
նին մէջ իւր նախորդէն բոլորովին
ուարժար կը շարժի հայ փաստա-
բանին հետ: Գրեթէ կը վաճառէ
գոմիւսըն արտառոց խօսքերով:
'՝. Զիւմրուտ ալ իր կարգին կը-
ծու նամակով մը կը լուսայ Գիւ-

տանին, որ այն ատեն իսկ վրէժ
լուծել կը փորձէ, կը դիմէ Սթոյ-
լօֆի նախարարութեան և բաւա-
րարութիւն կը փնտռէ անոր գոնէ
քաղաքէս հեռացման մէջ, բայց
չը յաջողիր, սակայն վրէժխնդրու-
թեան ոգին ալ չմարիր, առիթ
կըսպասէ և ահա այս ալ ինքնին
ներկայացաւ:

Երկու տաճիկաց վրայ մանրա-
մասն տեղեկութիւն չունիմ, միայն
կըսուի թէ երիտասարդ թիւրքերէն
են: Ըսողներ ալ կան, որ իբր թէ
պալատական լրտեսներ լինին:

Վերջերս քաղաքս եկաւ Ահմէտ
պէյ անուն Պէրուլթի ունեւոր ա-
րապ մը: Սա եկած օրէն յայտա-
բարեց որ թիւրքերէն արապերէն
լրագիր մը հրատարակելու դիմա-
ւորութիւն ունի և այս մասին
ալ պէտք եղած ամեն պատրաս-
տութիւն տեսնելէ զատ իւր շուրջը
կը ժողովէ իբրեւ օգնական և վե-
րոյշեալ երեք անձերը: «Իսլահ»
տաղաւին չհրատարակուած խմբ-
ագրութիւնը ժողովներ կը գո-
մարէ անոր ուղղութիւնը գծելու
համար: Իրենց հետ կը գտնուի
եղբի գրեթէ միշտ մի ուրիշ հայ
եւս:

Մէլհամէ էֆ. ժամը ժամին լուր
կառնէ այս բոլոր անցած դար-
ձածներուն և խօստածներուն վրայ:
Թիւրքը հրատարակուելէն երկու
օր առաջ ալ քովը կը կանչէ Ա-
րապը, կը յայտնէ անոր, ի զար-
մացումն Արապին, մինչեւ իսկ ա-
մեն մէկին ինչպէս նստիլը և ինչ
խօսիլը և կը սպառնայ որ Պուլ-
կարիաէն արտաքսել պիտի տայ,
եթէ թիւրքը հրատարակեն:

Ահմէտ պէյ, որ արդէն անձամբ
կը ճանչնայ եղբի գոմիւսը, սաստկապէս յուզուած ինք ալ կը
սպառնայ Մէլհամէին, յայտարե-
րելով որ եթէ արդարեւ Պուլկա-
րիաէն արտաքսուի, լծնտօն պի-
տի երթայ և հոն պիտի հրատա-
րակէ, բայց իրենց հաշիւներն
ալ ի Պէրուլթ պիտի մաքրուին,
ուր երկուքն ալ ազգականներ,
քոյր ու եղբայրներ ունին եղբի,
կերեւել ըսել կուզէ, որ այս պա-
րագային պիտի գրէ իրայնոց
Մէլհամէներէն վրէժ լուծելու
համար:

Այսպէս թէ այնպէս «Իսլահ»ի
առաջին թիւն ելաւ անցեալ երկու
շաբթի, մէջը պատկերով մը, որ
թուրքերոյ թաղումը կ'ը ներկա-
յացնէր: Թիւրքէն Պուլիս ալ կը

դրկուին պալատականներու, Սատ-
րագամին և ուրիշ բարձրաստիճան
պաշտօնէից հասցէին: Սատրա-
գամը կատարած քովը կը կանչէ
Պուլկար գործակատարը և կը
յանձնարարէ իսկոյն գրել տեղս
առ որ անկ է թիւրքը խաբանելու
համար: Հրահանգներ կը տրուին
և գոմիւսարին. որ անցեալ ուրբաթ
ներքին գործոց նախարարին կը
դիմէ, բողոքագիր մը կը մատու-
ցանէ «Իսլահ»ի հրատարակու-
թեան դէմ, և ըստ երեւոյթի ալ
գոնէ առջի բերան միայն երեք
աշխատակիցներուն վրայ ծանրա-
նայով զանոնք «սէրսէրի» կը հեր-
կայանէ և անոնց արտաքսումը
կը պահանջէ: Արապին համար չը
բողոքեր այդ օր: արդեօք անոր
համար, որ մի գոցէ այստեղի
արարքները Պէրուլթի մէջ արձա-
գանք չը գտնեն, թէ կը կարծէ,
որ աշխատակիցներուն հեռացու-
մով Արապը չկրնար այլեւ թիւրքը
շարունակել, թիւրքը ինքնին կը
գաղթի: չգիտցուի, և ահա անց-
եալ շաբաթ կէսօրին ոստիկանու-
թիւնը ձեռքաւորեց «Իսլահ»ի մի-
այն երեք աշխատակիցները և
բանտարկեց, ուր իրենց կը յայ-
տարարուի թէ բարձրագոյն հրա-
մանաւ է իրենց ձեռքաւորումը և
թէ ի Ռուսմանիա պիտի արտաք-
սուին:

Ուշ ատեն տարածուելով լու-
րը մեր ազգային շրջանին մէջ,
գաղթականութեան հովիւ Արթ.
Տ. Արիստակէս քահանայ գիշե-
րայն ուղղակի ներքին գործոց
Նախարարին դուռը ձեռք կառնէ,
որ դժբաղդաբար չբացուի, զի
Պ. Ռատոսլավով գործ ունի եղբի
և եթէ կէս ժամ յառաջ գնացած
լինէր, պիտի կրնայ ընդունիլ ե-
ղբի, և կը յայտնէ որ յաջորդ օր
կիւրակէ առաւօտեան ժամ 9ին
պիտի կրնայ ընդունիլ եղբի: Ա-
ռաւօտուն, կիւրակէ, Արթ. տէր
հայրը, թէեւ մի քիչ ուշ մի ազ-
գայնոյ հետ նորէն գնաց, բայց
Պ. Նախարարը դարձեալ կը մեր-
ժէ ընդունիլ առաւելելով թէ ժա-
մանակին գնացած չեն: տրուած
գրաւոր բացատրութիւնը թէ պա-
տարագիշ լինելով չէ կրցած ճիշդ
ժամանակին գնալ, չէ գորած հա-
մազելու նախարարը:

Արդէն ժամ 8ին քառորդ միա-
ցած ձեռքաւորեալք ճամբայ դը-
րուած էին ոստիկանաց հսկողու-
թեան ներքեւ: Ժողովուրդ, թա-
ղական և քահանայ յուզուած վի-
ճակի մէջ դպրոցը հաւաքուած
կ'որոշեն այլ եւ այլ միջոցներ ձեռք
առնուլ նոյն իսկ կիւրակէ գոնէ պ-
Զիւմրուտը պաշտպանելու և ազա-
տելու համար: հեռագիրներ տը-
րուեցան այլ և այլ ազգայնոց ի
Ռուսմանիա, Սերպիա, Փլէշնա և
Նիքոպօլիս: Նշանաւոր փաստա-
բան պ. Ֆրէնկեանին դիմում եղաւ
որ հաճեցաւ իրեն դիմողներն աս-
դին անգին պաշտօնական տեղերը
տանիլ, օրինաց սահմանին մէջ
բողոքել և խնդրել, որ գոնէ ի
Ռուսմանիա չարտաքսուի և սպա-
սէ ի Փլէշնա ցնոր անօրէնութիւն
և կամ ի Սերպիա զրկուի, զի
ազգայնոց մէջ սա համոզումը կը
տիրէր, որ Ռուսմանիա թուրքին
կը յանձնէ:

Ուրախալի է որ աշխատութիւնը
պարապ չգացին: երկու տաճիկ-
ները վաճառուած են ի Ռուսմանիա
իսկ Պ. Զիւմրուտ ցարդ կը մնայ
ի Փլէշնա, և այժմ կաշխատուի
իւր վերագործին, որուն տարա-
կոյս չկայ, քանի որ արեւական
և քաղաքական յանցանք մը չու-
նի:

Մէլհամէ էֆ. յոխորտացած իւր
այս ձախող յաջողութենէն Արապը
կը կանչէ: «ահա, տե՛ս, կըսէ,
ինչե՛ր կրնամ ընել» և կըսպառ-
նայ յանուն Մուհամմէտի զինքն
ալ արտաքսել տալ եթէ «Իսլահ»ի
երկրորդ թիւը հրատարակէ: յա-
նուն Մուհամմէտի կերպով Ահմէտ
պէյ ալ, որ պիտի հրատարակէ
երկրորդ թիւն ալ և պիտի շա-
րունակէ ալ, որչափ կարելի լինի.
և արդարեւ երկրորդ թիւն ալ
հրատարակուեցաւ երկուշաբթի,
իւր օրին, սակայն երեքշաբթի
Արապն ալ բռնուեցաւ և ցարդ
բանտը կը մնայ: կըսուի թէ տաճ-
կին պիտի յանձնուի, զոր չեմ
կարծեր: աւելի հաւանական է,
որ արտաքսուի, եթէ կան զօ-
րաւոր պատճառներ:

Թէ ինչ խաղ է այս: ո՞վ է որ
խմբագիրներու խորհրդակցութիւն-
ները բառ առ բառ գոմիւսերին կը

հաղորդէ. Արապը, Հաւը, թէ երեք ձերբակալեալներէ մին: Եթէ լրագրին հրատարակութիւնը յարձակում կը նկատուի Սուլթանին դէմ, ինչո՞ւ օրինական պատասխանատուն դատի չհանձնար. կուր ըստ օրինի և գրողները կը մատնուին:

Ինչ գաղտնիք կայ... շիտակը չիմ ուզեր զլուծիս յոգնեցնել են. թաղութիւններ ընելով, միայն թէ՛ թող ներուի դիտելու որ անցեալ տարի երբ նախորդ կառավարութիւն «Խրաւունք» ի խմբագրի ներքին մին և ուրիշ մի ազգային գրեթէ նմանօրինակ պարագային մէջ վտանգէն ուղղակի Օսման արտաքսուեցան, «Նարոտի փրավա» բողոքեց թէ ինչ անիրաւութիւն է այս, ինչ օրէնքով կարտաքսէ Սթոյլօֆ և արդարեւ շատ շիտակ, շատ իրաւացի. այժմ ինչ օրինօք կը գործուի, ո՞վ կը հրաւայէ մեզ, Սուլթանը թէ սահմանադրութիւնը:

Յաւալի է արդարեւ շատ ցաւալի է, որ մեր կուսակցութիւնը այսպէս կը մտածեն և կը գործեն քանի որ գործի վրայ չեն, ալլապէս կը մտածեն և կը գործեն, երբ գործի զլուծիս պաշտօնի վրայ են:

Այս օր կը մնայ սահմանադրութիւնը. ո՞ր արդարութիւն և իրաւունք:

Ես կը կարմրիմ շիտակը հաւաքակ սաստկաշունչ ցուրտ հոտին:

Ա.

Յ. Գ.—Այսօր ալ կը բացուի ազգային ժողովը, Սպարանիէն, Նոյն

Բարիկ, 25 հոկտ.

Վիրաքոճներու գօնկրեսը

Վիրաքոճական գօնկրեսը այս միջոցիս Բարիկի մէջ հաւաքուած է Լիօնի Տօքթ. Փօսէյի նախագահութեան տակ: Ֆրանսայի և օտար երկիրներու ամենափառլուն վիրաքոճներն այդ գօնկրեսին կը մասնակցին ի միջի ալլոց այնտեղ

կը տեսնուին Պուքարէշթէն՝ Տօք. տը Ճէնէվէնէքօ, Ժընէվէն՝ Ռէ. վէրտէն, Սթրազպուրկէն՝ Պաքէլ եւն: Առաջին օրէն սկսեալ գոն կրէսի մասնակցող վիրաքոճներն Բարիկի գլխաւոր հիւանդանոցին բուն այցելութեան գացին:

Կլէնգօէ Տոնտէի խնդիրը

Կլէնգօէ-Տոնտէի խնդրին մէջ Անգլիացոց խոստովանած կուսակցութեան անդամ շատ են որ, Լոնտոնի մամուլին յաղթական երգերն աւելի քան ցաւալի ազդեցութիւն մը կընէ: Գրեթէ 500 ան. ձինք պատերազմելու անկարող տուած են, այսինքն 100ին 10ը. և ասոնցմէ 50ի չափ սպաներ: Ամբողջ Լոնտոնի բոլորովին կը տրտուած են: king's Royal rifle-ի 14 սպաներէն 11ը ծանրապէս վիրաւորուած են: Իրաւ այդ կապա. ցուցանէ թէ այդ ճէնթըմները ամեն ջանք ըրած են իրենց մարդիկն (զօքերն) առջև քշելու. այս կապացուցանէ նաեւ թէ այդ զօքերն պէտք ունէին առաջ քշուելու:

Եթէ այս գործն հետեւեալ օր մը չունենար, անտարակոյս նա կարեւոր յաղթութիւն մը պիտի լինէր: Սակայն Պօէրսնէրն զորս յաղթուած կը կարծէին տարօրի. նակ քաշութիւն մը և կուսակցութիւն մը ունէին, որովհետեւ տեղի տուին քանի մը ժամէ յետոյ յարձակողական գիրք մը բռնելու համար և պաշարելու Կլէնգօէի բանակն որուն Սիմոն զօրավարն կը կարծէր թէ՛ երկար ժամանակի համար հեռացուցեր էր Պօէրսնէ. ընդ:

Անտարակուսելի է որ եթէ մենք կարենայինք անգղիական հեռագիրներու քով դնել Պօէրսնէրէն և կող լուրերն, շատ մը բաներ պիտի բացատրուէին որոնք այժմ մութ են: Մենք պիտի գիտնանք զօրօրինակ թէ ինչ եղած են 18րդ զօրաբանակի հիւսարտներն որոնք Պօէրսնէրու վրայ յարձակեցան կը.

Լէնգօն յետոյ: Մենք կրնանք նոյնպէս գնահատել Լասկոյակի զպատերազմի կարեւորութիւնն: Ինչ որ մինակ անգղիական տեղեկութիւններէն կերեւայ որ Նաթալի մէջ Պօէրսնէրու յարձակումն լաւ կազմակերպուած չէր և եթէ անոնց թնդանթածիգ բանակն ստորին կը գտնուէր, այդ գիրքն չարգիւծեց Ուէիթ զօրաբանակն Լատիս. միթի գծին վրայ քշելու:

Գալով Մաֆրինկի (Թրանսիլա. լի արեւմտեան սահմանին վրայ) ութ օրէ ի վեր տեղեկութիւն մը ստացուած չէ. յայտնի է անգղիացիք չպիտի փութան պարտութիւն մը յայտարարել այդ մասին: Պօէրսնէրն վիշտի վերջոյ պիտի ջախջախուին այս մասին բնաւ կասկած կարելի չէ: Երկու հարիւր հազար զեւազներն երկար ժամանակ չեն կրնար գիմադրել Բրիտանական կայսրութեան զօրութեանց: Սակայն այդ մեզ չարգիւծելու մտածելու որ Պօէրսնէրու վրայ դրուած պատերազմելու պարտքն վերին տատիճանի անարդար և զղուշի է: Այդ մարդասպանութիւնը որ կը գործուի ամբողջ մի ժողովուրդի վրայ, Ժիթ. դարու վերջին, պէտք է մտածել տայ բոլոր ազգերն թէ կան աշխարհիս մէջ ցեղեր, որոց միակ նպատակն է ուրիշ ցեղերն լափել, ոչնչացնել, և որոց դէմ պէտք է հարկաւոր միջոցներն ձեռք առնուլ: Ժամանակ է որ Եւրոպայ տար վրայ մտածէ:

Տոն-Տոն գնդակներ

Կերեւայ թէ Անգլիոյ ստորին սենեկին ֆինանսական յանձնախումբն ինքրած է պետութեան եկամուտը: Դեւանադէն որ «տուժտուժ» գնդակներն արգիւծին և կը յայտարարեն թէ բանակին հրաման է է զրկուած այդ գնդակներն չըգործածելու համար: Յետոյ կը տեսնենք թէ հրամաններն ինչպէս գործադրուած են: Վիկթորիա թագուհին այսօր Պալատէն կը

հեռագրէ թէ Կլէնգօյի պատերազմը իւր սիրտն կայրէ: Շատ գիրքն էր թագուհւոյն այդ պատերազմին առջեւ առնուին, բաւական էր որ նէ բարեհաճէր իւր որդւոյն և թոռան պէտք ելլած դրամն տալ և Շամպերլէյի հոսկցներ որ հիգլաստանի կայսրուհւոյն աւելի կայսերական չլինի:

Ա. Աւաի և Մ. Դաւիթ-Բեկ

ԲԱՌԱՄՍԵԱՅ ՀԱՇՈՒԵԿԵՒ
ԱՂՔԱՅԻՆԻՍ ՄԱՍԱԽԻՍԻ Փ. ՊՈԼՏՅ
Յունիս 1հե մինչ 30 սեպտ. 1899

ՄՈՒՏԻ	Լեփ արծաթ
Շարժական դանձանա. կէ գոյացած հատոյթ . . .	283. 70
Մասնակի հանգանակութեան մը . . .	24. —
Տիկին Եղ. Թէրզեանի ձեռամբ մի քանի տիկիններէ նուիրատուութիւն . . .	26. 2. 60
	336. 30
Նախորդ հաշուեկշիռէն գանձապետին քով պատրաստ դրամ . . .	40. 80
	377. 10
ԵԼՔ	Լեփ արծաթ
Աղքատներու շաքարած. կան նպատ . . .	137. —
Աղքատներու շաքարած. կան հազարին . . .	48. 20
Աղքատներու ճամբորդութեան համար նպատ . . .	40. —
Աղքատներու զանազան նպատ . . .	7. 50
Հիւանդի մը կաթ եւ միս Աղքատ տիկինի մը և օսմանայ տան վարձք . .	3. —
Դեղերու . . .	18. —
Բժշկի համար կաթի վարձք . . .	24. 80
Գանձանակը պարսպնողին շաքարական վարձք	2. —
Գանձանակը պարսպնողին նուէր իր անձնուէր ջանքին համար . . .	34. —
Թղթատար . . .	8. —
	0. 30
	322. 80
Գանձապետին քով պատրաստ դրամ . . .	54. 30
	377. 10
Այս առթիւ մեր ջիւղ հնորակալութիւնները կը յայտնենք բոլոր այն անձանց որոնք նիւթապէս և բարոյապէս օժանդակեցին մեզ ազգային օգտուէր այս ձեռնարկին մէջ:	
Մնա՛ք յարգանքով	
Ի՛նչպէս աղքատախնամի Ասեմապիտ	
Ասեմապիտ	

ԲՈՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (52)

ՓԱՄԱՆԱԿԱԿՅ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

— . 0 . —

ՄԱՍՆ Բ.

Փոքր Արմատնի առաջնակարգ ընտանիքներէն է Արխանեան զերդաստանը, հարիւր հազար ոսկիի հարստութեամբ: Այս ընտանիքի հարազատ զաւակներէ մին եղած է հաճի Գալուստ Արխանեանը. մեր նկարագրած զէպքերու ատեն, 1891ին, ազգի ցաւերուն մօտէն գիտակցոյս երիտասարդը արդէն իսկ յայտնի նշաններ ցոյց տուած էր իր զէպի ազգը ունեցած անկեղծ սիրոյն: Պոլիս գտնուած ատեն շատ մը յեղափոխական խումբերու հետ յարաբերութիւն ունեցած էր. յարաշփուածի մէջ գտնուած էր Վահրամի հետ որուն վրայ կը գուրգուրար եւ անկէ կը յարգուէր փոխադարձաբար: Անիկայ Պոլիս շատ կընէր նիւթական նպատանք

իւ վահրամ հպարտութեամբ քանին բոլ իբր օրինակ ցոյց կուտար Գալուստ որ զէթ իր քաղիք չէր խնայեր. Վահրամին բոլորովին արուած ալ չէր շատ հեռուն ալ գուշակելու. անիկայ մօտէն ուսումնասիրած ըլլալով հայ ջոջերը եւ անոնցմէ առաջ եկած սերունդը երբէք մտքէն չէր անցուցած որ անկէ արիւն ու կեանք զոհելու պատրաստակամութիւն ունեցող հերոս մը կրնայ առաջ գալ: Ինչ որ հաճի Գալուստ Արխանեանը ճշմարիտ յեղափոխական փութելով զարգարեց և զայն լեռներ հանեց իր տակաւ Հայրենիքէ ստացած արտապատառ տեղեկութիւնները եւ անոնց հոլ ու բոց ապաւորութեան տակ ազատաստութիւնը եղաւ. ով որ Պոլիսի մէջ իրեն հանդիպած է 90 թուականին, անիկայ մեզ հետ կրնայ հաւատաւոր որ բաւական էր Օսմանեան բռնապետութեան դէմ էն կծու բողոքները լսել իր բերնէն բաւական էր որ խօսակիցը իրեն թելադրէր խօսիլ: Օսմանեան կառավարու-

թեան վարձկան լրտեսները բնականաբար այդ ազատաստ կրտսերին հօտը քիչ ատենի մէջ առին, շատ անգամ իրողութիւններու վրայ, յաճախ ալ շինծու ամբաստանութիւններով Իւսկիւտարի միւթէտարիֆը բանտարկել տուաւ Գալուստը: Ամեն անգամ որ Արխանեաններու փութը կը խուզարկուէր եւ հաճին բանտ կը տարուէր հարիւրաւոր ոսկիներ պէտք կըլլային եւ զօրաւոր միջամտութիւններ զեր կը կատարէին անոր ժամանակաւոր ազատութիւնը ձեռք բերելու համար:

Գալուստ զղուած կառավարութեան անվերջաւարի հալածանքէն վերջ ի վեր ջոյ կորուշէ իր ծննդավայրը, Արմատն վերադառնալ. քաղաքը զիւղին հետ կը փութէ բայց իրերը չեն փոխուիր բնաւ: Երիզայի, Գուրուշայի, Տիւրիկի եւ Ակնի կառավարական պաշտօնեաները Պոլիս յանկերգը հոս ալ կը կրկնեն եւ հաճի Գալուստ հոս ալ կը շարունակէ նոյն իւզոտ պատառը ըլլալ ուրիշ կառավարական ապական-

ուած ցեղերը ոսկի կը ծծէին: Երիտասարդ Արխանեանի հոգին կը փռկի. թրքական այս խայտառակ կատակերգութիւնը կը կատարեցնէ զինքը. անմիջապէս լուր կը զրկէ Ալիքսանի եւ երբ Անիկայ Միւստան կը հաճի զիշեր մը ամբողջ կը լուսնայէ անոր հետ: «Զպիտի կրնամ համբերել բռնապետութեան կեղեքումներուն Ալիքսան ալ համբերութիւն չմնաց վրաս» — Նպատակը, կը հարցնէ Ալիքսան: — Ելկու օր ետքը արժանաւոր ընկերով մը հետ լեռը պիտի քաշուիմ: — Ինչ ընելու համար. . . աչք աչքի, ակոյս ակոյսի պիտի գամ փոսած կառավարութեան դէմ եւ եթէ օր մը իմանաս որ ինկեր եմ բռնութեան դէմ մղած պայքարիս մէջ, համոզուած եղի որ հայու արժանի պարտքս կատարած եմ:» Ալիքսան խոհեմութեան շատ ալ կուսակից, նկատելով որ հաճին երկուսուրէ մէջ մնացած էր, թէ պարագա-

ԶԵԿՈՒՑՈՒՄ


ՔԱՂԱՎԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Փ. ՊՈԼՍՈՅ

Թիւ 9

Խմբագրութիւն Իրաւունք լրագրի
Խորհուրդս իբր 10 հոկտեմբեր 1899
նստի մէջ որոշեց տեղական Ազգ. լրագրի
միջոցաւ ազգաբարեւ թէ, ասկէ վերջը հոգեւորական մը առանց
պայտօն մը ունենալու եւ կամ առանց
խորհրդայն հրաւերի, եթէ քաղաքս պայ,
իր ծախքերուն համար ինք՝ (խորհուրդը)
պատասխանատու թիւն չը պիտի
ստանձնէ. ուստի խնդրենք լրագրորդ
միջոցաւ հրատարակել ներկայս:

Ի վերջոյ Թաղական Խորհրդոյ
Անճնադպիր Անճնապետ
ԱՌԱՔԵԼ ԳԱՅԱՅԵԱՆ ԳՐԻԳՈՐ ՔԱՄՐԱՅԵԱՆ
13 հոկտեմբեր, 99

ՏԻՈՒՐ ԲԱՐՔԵՐ



Տեղացի ու գաղթական բոլոր Հայոց
ծանօթ է հայաւէր փաստաբան Տիար
Նիքոլայ Տրակուլէֆը, որ իր այդ աս-
պարէզին մէջ միշտ պաշտպան հանդի-
սացած է այն ամեն հայ անհատի որ
կատարական կամ դատական ու եւ է
զորմ մը ունենալով իրեն զիմած է:
Տիար Նիքոլայ ամեն առթիւ մէջ անձ-
նոյ իրաւար յոգնած, աքնած եւ նոյն
խկ կողմած է իր ազգակիցներու հետ
երբ խնդիր հայ մը պաշտպանելու վը-
րայ է. մինչեւ իսկ իրեն իբր փաստա-
բան տրուած նիւթական վարձատրու-
թիւնները մերժելու ազնուութիւնը ու
նեցած եւ աւելցուած է այս խօսքերը.
«Նիքոլայ, ես Մակեդոնացի, դուն Հա-
յաստանցի, ամենքս ալ միեւնոյն ճի-
ւապին զօնքը, ինչպէս կարելի է
վարձք ընդունել ձեզ պաշտպանած
ըլլալու համար, ես նուիրական պար-
տականութիւն մըն էր որ կատարեցի»:

Ահա այս աստիճան ազնիւ մարդ մը
անցեալ օր հայ մը դատի տալ ստիպ-
ուեցաւ Վառնայի հաշտարար դատաւո-
րի առջեւ:

Ահա խնդիրը. — Տիար Տրակուլէֆ
ծանօթ հայաւարութեամբն իր նոր կա-
ռուցանել առած հոյակապ շէնքին մէջ
մեծաւ մասամբ հայ գործաւորներ բա-
նեցուցած է, այս ամբողջ ամառը, ուր
հազարաւոր հայ եւ Պուլկար գործաւոր-
ներ անցործ մնացած էին: Հայ դադ-
թականներէն Գրիգոր Պետրոսեան ան-
ձի մը հետ ալ պայմանաւորուած է չէն
քին մէջ խոհանոց մը եւ բակին դուռ-

ըը շինել տալու: Բայց Գրիգոր ինքը
ատաղձագործ չըլլալով դրան շինու-
թիւնը Յարութիւն Գարբիէիանի կը
յանձնէ, ստորագր. Տ. Տրակուլէֆէն առ-
նելու պայմանաւ. եւ 2 1/2 ամիս ա-
ռաջ այդ երկու հայերը կերթան Տ. Տր-
ակուլէֆէն դրան ատաղձը կըստանան
ինքնակայութեան մի քանի վկաներու
եւ կը խոստանան քիչ ժամանակէն
յանձնել դուռը:

Բաւական ժամանակ կանցնի զուոր
չի գար, բայց Գրիգոր Պետրոսեան Տ.
տրակուլէֆէն կըստանայ դրամի մեծա-
գոյն մասը: Տ. Տրակուլէֆը բաւական
տոնն ալ սպասելէ վերջ կերթայ Յա-
րութիւնի քով եւ կապէ որ իրեն
յանձնէ կամ զուոր եւ կամ ատաղձը:
Յարութիւն կը յայտարարէ թէ բան մը
չկընար իրեն տալ որովհետեւ Գրիգորը
իրեն վարձքը վճարած չէ:

Տ. Տրակուլէֆը Գրիգորը եւ Յարութի-
ւնը մէկտեղ բերելով, կարող կը-
լայ համաձայնեցնել զիրենք որ գործը
լննցնեն, այսինքն Յարութիւն դուռը
չինէ ու Տրակուլէֆին յանձնէ. իսկ
Գրիգոր պէտք եղած դրամը Յարութի-
ւնին վճարէ: Ասկէ ետք օր վերջ
Յարութիւն իր աշակերտին միջոցաւ
տախտակ մըն ալ կառնէ Տ. Տրակու-
լէֆէն գրան շրջանակին համար:

Գրան մը օր վերջ Տ. Տրակուլէֆը
կերթայ իր գուռը պահանջելու, եւ երբ
կը ներկայանայ Յարութիւնին, սա ի
ներկայութեան բաւական անձերու կը
պատասխանէ թէ ոչ զուռ չինել խոս-
տացած է եւ ոչ ալ իրմէ տախտակը ու-
ցունած է. իբր թէ Տ. Տրակուլէֆը իր-
րեւ գրպարտիչ իրեն ներկայացած ը-
լար:

Ազնիւ փաստաբանը պատուոյ նախան
ձախդրութեան մղեալ կ'ստիպուի դա-
տարանի յանձնել Յարութիւնը. որուն
հրապարակաւ երգում կառաջարկուի
թէ՝ մինչեւ սեպտ. 13 պարտաւոր եւ-
ղած է Տ. Տրակուլէֆը գուռը յանձնե-
լու:

Բայց բոլոր ներկայք պարմացան երբ
տեսան թէ Յարութիւն Տ. Տրակուլէ-
ֆէն բան մը չառած ու բան մը չը խոս-
տացած ըլլալուն համար երգում ըրաւ:

Այժմ չենք գիտի Յարութիւն ինչ-
պէս պիտի կրնայ օձիքը ազատել. եթէ
Տ. Տրակուլէֆը անոր սուտ երգուած
ըլլալն հաստատել ելնէ, որուն պատի-
ւը տարինելով բանտարկութիւն է:

Այդպէս պէտք է վարուիլ մեզ սի-
րող ու յարգող օտարներու հետ:

ՈՒՆԻՆԴԻՐ

ԼՐԱՔԱՂ

— Ծ —

Անցեալ կերակի առաւօտ Օր-
մանեան պատրիարք Մայր Եկե-
ղեցւոյ մէջ քարոզ խօսելով, հե-
տեւեալ տեղեկութիւնները հաղոր-
դած է ժողովրդեան իբր կայսե-
րական մեծ շնորհներ:

Նախ, ճամբորդներու երթիւկի
մասին դիւրութիւն ընծայուած է
թէ՝ Թուրքիոյ մէջ և թէ՝ արտասահ-
ման գտնուող օսմ. հպատակնե-
րուն:

Երկրորդ, 51 բանտարկեալներու
արձակումն, որոնց 10ը Արապկե-
րէն, 39ը վանէն, 1ը Սիւսս, տիաէն և 1ը Տրապիզոնէն: Պատ-
րիարքը յարած է թէ՝ անխոհե-
մութեան, անպաշտութեան հետե-
ւանքով օրէնքին խտուածիւնը ի-
րենց վրայ հրաւիրող ուրիշ բան-
տարկեալներու մասին ալ շնորհ կը
յուսայ և յիշած է դատական նա-
խարարին նպատաւոր տրամադ-
րութիւնները մէկ քանի բան-
տարկեալներու նկատմամբ:

Երկրորդ հինցած եկեղեցիներու
նորոգութեան, ինչպէս նաեւ նոր
որբանոցի մը (Գարակէօզեան կը-
տակով կառուցանելի) հաստատ-
ման հրաման ստացած է: Օրման-
եան աւելցուցած է նաեւ թէ իր
ուշագրութեան մասնաւոր առար-
կայ եղող տարագրելոց կացու-
թեան համար ալ զոհացումներ
տուող տնօրինութիւններ եղած
են, հրահանգ տրուելով սպարա-
պետութեան, ծովային պաշտօնա-
տան և լծնդանութեան վերա-
տեսչութեան՝ որպէսզի տարագը-
հալներու անգամաձիւր մնացած
յետեւեալ դրամները գանձուին և
զրկուին:

Օրմանեան հաղորդած է նաեւ
կիլիկիոյ կաթողիկոսական ընտ-
րութեան ընդփոյթ կատարման ե-
լած հրամանը:

Իսկ քարոզին վերջին մասին
մէջ խօսելով վանայ, Բագէշի,
Տիգրանակերտի և Գարբիքի նա-
հանգներուն մէջ հունձքերուն նուա-

զութեան և երաշտութեան վրայ
կոչում ըրած է Ազգին գթասի-
րական զգացումներուն՝ իրենց կա-
րօտ եղբայրներուն օգնելու հա-
մար. յիշած է նաեւ թէ՝ դատա-
տական նախարարը իրեն յայտ-
նած ըլլալ թէ վանայ կուսակա-
լութեան տակ գտնուող ժողովրդ-
եան կարօտութիւնը կառավարու-
թեան կողմէ ինկատի առնուած
է:

— Նպաստից Թանձնաժողովոյ
վերջին նիստին Օրմանեան նախա-
գահեց, ուր որոշուեցաւ 250 ոսկի
վան, 150 ոսկի Բագէշ և 30 ոս-
կի Երզնկայ զրկել, ամենակարօտ
գիւղերուն իբր սիրմագին յառա-
ջիկայ տարուան ցանքի համար:

— Կրօն. Ժողովին վերջին նիս-
տին մէջ կարգացուեցաւ Թուլչայի
եկեղեցիին Հոգաբարձութեան մէկ
գիրը, որմէ ժողովը տեղեկացաւ
թէ՝ Երեւում քահանայ Թուլչայէն
մեկնած զացած է Ֆօքչան, ուր
թափառական կը շրջի, և թէ Հո-
գաբարձութիւնը Ֆօքչան զրկած
է անոր վերաբերեալ պատրիար-
քական պաշտօնագիրը, որ կը
հրամայէ Մուշի Առինչ գիւղը եր-
թալ, որուն վրայ քահանայ ձեռ-
նադրուած է:

— Վանայ այցելու հովիւ Տ.
Ներսէս եպիսկոպոս Ասրանեան՝ իր
պաշտօնին զերարեւելալ կարգ մը
գեթուարութիւններու պատճառաւ
վանէն մեկնելով վարագայ վանքը
առանձնացեր է առանց հրաժարե-
լու: Կ'երեւայ թէ Գեր. Ասրան-
եան բնաւ չէ մոռցեր իր վաղեմի
սովորութիւնը զոր ի գործ կը դը-
նէր երբ առաջնորդ էր Եւգոնիոյ,
ուր սիրտը նեղուած պահուն ա-
ռաջնորդարանը ու քաղաքը ձգե-
լով Յովակիմ-Սննայի վանքին մէջ
կ'առանձնանանար երկար ամիս-
ներ:

— Տեղուոյ Ընթերցասիրաց Ըն-
կերութիւնը՝ որ երկար ժամանա-
կէ ի վեր գրեթէ կազմալուծեալ
վիճակ մը ունէր, կերակի օր ազգ-
վարժարանի մէջ ընդհ ժողով մը
գումարելով ներկայից մէջէն ընտ-

ները զինքը հարկադրած էին չկրցա-
ր եւ է դադափար տալ անոր:

Ինչ որ խօսեցաւ Արխանեան Ալիք-
սանին շատ ձիւղ էր. երկու օր ետքը
կատարական պաշտօնատունները լուր
հասաւ. որ հաճի Գալուստը Նշան Փա-
փաղեանի հետ լիւս քաշուած աւեր կը
սփռէ թուրք տարրին մէջ. ինքզինքը
պարտկելու ջանքը չէր ըրած երիտա-
սարդ Արխանեանը որովհետեւ իր պար-
թեւ հասակը, զօրաւոր արտայայտիչ
ղէմքը զինքը ընդհանրապէս պիտի մատ-
նէին որքան ալ ջանար:

Հաճի Գալուստի առած յանգուքն
քայլը հետզհետէ իր չուրջը բոլորից
սրտոտ հայ քաջերու խումբ մը, որոց
մէջ կը գտնուէին խորհն Բօթաթոնեան,
Արմաւնի Զաքար եւ ուրիշներ: Հայ
ասպատակներու քաջագործութիւնե-
րու լուրը Պուլիս հասաւ եւ կեդրոնա-
կան կառավարութիւնը իսկոյն հրա-
հանգ տուաւ որ ամեն գնով Հաճին
ձերբակալուի. դրամ եւ շքանշան խոս-
տացուեցաւ անոր որ Արխանեանի գը-

լուիւր պիտի կրնար յանձնել կառավա-
րութեան:

Ճիշդ այդ ատեններն է որ Ակնի մէջ
Պուտաբեանի ահաբեկիչները Ղուկաս
Վարդապետեան եւ Պօղոս Գալէնտէ-
եան չկրնալով Ակնի մէջ պարտկուիլ,
միեւնոյն ատեն Արխանեան խումբին
հանած հոշակէն հրապարտուած գիշե-
րանց խօսքերի ճամբով կանհտան. իւ-
րան կուշտի մը վրայ առաջին անգամ
կը հանդիպին թուրքի մը զոր կըսպան-
նեն. այգիներու մէջ զիրենք կը գիտա-
ւորէ հարկահաւաք ոստիկան մը որ
զանոնք ճանչնալով գեղացիները կը
ժողովէ իր գլխին անոնց օգնութեամբ
կառավարութեան փութոյ պնդու-
թեամբ փնտրուած այդ երիտասարդնե-
րը ձերբակալելու համար: Ոստիկանին
հետեւող խումբանը սարսափով համա-
կուած որքան ալ կը հետեւի անոր չի
համարձակել շատ օտուեալ հայ անձ-
նուրացներուն. ոստիկանը քաջութիւն
կուենայ սակայն «անձնատուր եղէք»
ըսելու հայ կտրիճներուն որոնք փո-

խաղաղաբար զգուշանալ կը պատուի-
րեն իրեն. ասոր վրայ թուրք պաշ-
տօնեան ետ կը քաշուի: Երիտասարդ
քաջերը քիչ ետքը կը հանդիպին ու-
րիշ թուրք զեղացիներու, ասոնք ալ
անոնց զօր մը գնդակէն սարսափահար
կը ցրուին: Վարդապետեան եւ Գալէն-
տէիան անվտանգ կը հասնին Չալժու
Չալք. գետակը յորդած էր, սակայն
ժամանակ կորսնցնելու չէր գար: Վար-
դապետեան կը շաղկէ ընկերը եւ լողա-
լով գետակը կը կտրէ. ապա Փինկեա-
նի վրայով կերթան կը միանան հաճի
Գալուստին:

Միեւնոյն ատենին է որ Ակնից կծծի
Ապլա Պօղոսի երկու հայ երիտասարդ
ներկայանալով յանուն յեղափոխական
գործին նպաստ կը պահանջեն. Պօղոս
Պուտաբեանի եւ իր նմաններուն հա-
ւատարիմ ընկերը ատ երիտասարդնե-
րէ մին Մկրտիչ Թիւթիւնեանը ճանչ-
նալով զայն կառավարութեան ձեռքը
կը մատնէ. Մկրտիչ այս բանը խմանա-
լով հազիւ հազ կը հեռանայ Ակնէն եւ

կերթայ Արխանեանի պարզած ասպա-
տակական գործին փարիլ:

Ակնի թուրք բնակիչներէն Ստգը Է-
ֆէնտիի տունը գիշեր մը գողեր կը
մտնեն, գողերը Տէրախիցի քուրտեր է-
ին, Նարին Յովաննէսի զրդմամբ կա-
ռավարութիւնը երկրորդ օրը քաղաքի
բարեկեցիկ հայերէն Ժամկոչեան ձա-
նիկը կը ձերբակալէ. զուր տեղ ժամ-
կոչեան ինքզինքը զօրաւոր փաստերով
արգարացնել կաշխատի. գողութեան
գործին կը վերադառնի միեւնոյն ատեն
քաղաքական յանձանք ալ եւ զայն
մինչեւ Գարբիք կը զրկեն. նորէն տե-
ղին մէջ քննութիւն կատարելու հա-
մար, երբ ժամկոչեան Ակն տանելու
համար ճամբայ կը հանեն սա կը յաջողի
փախչիլ. ու աս ալ կերթայ կը միա-
նայ Արխանեան խմբին վերջապէս:

Շ. Կառնարակեան
(Շարունակելի)



րած է առժամանակեայ վարչու-
թիւն մը, որոյ պաշտօնավարու-
թիւնը պիտի տեսէ մինչեւ տարե-
գլուխ։

—Հանրաժանութ գրադէտ Տ.
Մատթէոս Մամուրեանի գրական
գործունէութեան յիսնամեայ յո-
բելեանը տօնակցաւ այս կիրակի
օր Զմիւռնիոյ մէջ. այդ առթիւ
կ. Պոլսոյ Ռաւմաթիական խորհուր-
դը արծաթեայ գեղակերտ կոթո-
ղիկ մը նուէր զրկած է բազմա-
գիւն յորհրդարին. պատրիարքն
ալ շնորհաւորական օրհնայիբ կոն-
գակ. Նաեւ Պոլսոյ ուսուցիչները
Ռօպէթի Գօլէթի հայ ուսանող-
ները, գրաւմաններ եւ ուրիշ ծա-
նօթ անձնաւորութիւններ իրենց
նուէրներով մասնակցած են։ Բա-
րիւն, կալկաթաքէ, Եգիպտոսէն,
Պարսկաստանէն եւ Ռուսաստանի
այլ եւ այլ քաղաքներէն, ինչպէս
նաեւ Ս. Էջմիածնէն շատ մը նը-
ւէրներ հասած են Տ. Միլթիսե-
զիկ Սրբազանի սր յորհրդարին
յանձնաժողովոյ նախագահն է։

—Օտար եւ հաւաստի աղբիւրէ
մե կիմանանք թէ Երուսաղէմի Հա-
յոց վանքը խուլարկութեան են-
թարկուած է վերջերս։ Մանրա-
մասնութիւնք առ այժմ կը պակ-
սին։

—Ամերիկայի հայ գաղթակա-
նութեան մէջ վարդապետական ան-
դրանիկ ձեռնադրութիւն մը կա-
տարած ըլլալու լուրը կիմանանք
այդ գաղթականութեան հոգեւոր
հովիւ Տ. Յովսէփ եպիսկոպոս Սա-
րաճեանի ստորագրութիւնը կրող
Յայտարարութենէ մը։

«Ուստըրի Հոլովական թիւին
ժողովը, կրտէ յայտարարութիւնը,
ներկայ ամսոյ (հոկտ.) 2ին գումա-
րելով, միաձայնութեամբ որոշեց
ընդունիլ թեմակալ հովիւ Ուստը-
րի Պ. Կարապետ Մարգարէտեան-
նը։ Ուստի, ըստ այս օրոշման,
անցեալ կիրակի ձեռնադրեցաւ ա-
ւագ սարկաւագ ըստ ծիսի Հայ-
Ս. Եկեղեցւոյ ի Ս. Փրկիչ եկե-
ղեցւոյ, եւ յառաջիկայ կիրակի,
հոկտ. 15ին, պիտի ստանայ քա-
հանարական Ս. օծումը եւ կիրակի
երեկոյին վեղարի օրհնութիւնը,
կոչման արարողութիւնը պիտի կա-
տարուի շաբաթ երեկոյին եւ օծու-
մը (ձեռնադրութիւնը ըսել կուզին
անշուշտ) կիրակի տուածտ։ Շա-
բաթ երեկոյեան ժամերգութիւնը
պիտի սկսի ժամ 7 ու կէսին, կի-
րակի առաւօտեանը 9ին եւ վեղա-
րի օրհնութիւնն ալ կիրակի երե-
կոյեան ժամը 6ին։ Ի գիտութիւն
բարեպաշտ ժողովրդեան ծանուցա-
նելով, մնամ աղօթարար Յովսէփ
եպիսկոպոս։»

Թերթիս խմբագիր Տ. Յ. Գ. ի
յանկարծ հիւանդանալուն պատճա-
ռաւ ներկայ թիւի քաղաքական
լուրերը կարելի չեղաւ ամբողջ-
ցնել։

ԹԻՒՐԻԱ ՆԱԿԱՏԻՍԱԹԸ

— ԶԵՐՈՒՄ —

Մէարիֆ Եղարէթի սէտարէ-
թին էմիրնամէսի իւզրէ, Թիւր-
քիստա զայրը միւսլիմ մէքթէպէ-
րինտէ թիւրքէի տէրս վերէն հօ-
ճալարն մասշընը մէարիֆ սան-
տըղընտան էօտէնիլէճէկինի հէր
թարաֆա իւրն իթմէքէ պէրապէր
մէքթէր հօճալարն ինթիսապը-
նա տըգգաթ օլընմասընը թէնպիհ
իթմիշ տիր։

—Անատօլու սէր գօմիսէրի միւ-
շիւր Շաքիր բաշանըն էօմէսի սա-
հիհ չըգտը։ Բաշաի մէրգում հոկ-
ճտէ Սինապտա վէֆաթ իթմիշ
տիր։ Շաքիր բաշա 63 եաշընտա
օլուպ 40 սէնէտէն պէրու ասքէ-
րիյէ վէ միւլէքիյէ ըէք չօգ մէմու-
րիյէթլէրտէ պօլընմըշ։ Խալը
վտըթ Ռուսչուք վիլայէթիտէ,
հէրաքտէ, Սօֆիատա վէ կիրիտ-
տէ վալի մուալիմի օլմուշ ըտը-
ֆազաթ քէնտի վէֆաթընտան էվ-
վէ մէքթէր էյալէթլէրին թիւրք
մէքալիմիտէն խիլաս օլտըղընը
կէօրտիւքտէն սօնրա տախի էվ-
վէթի գաւտարըրընը տահա ար-
թըրուպ սօն խէպասէթիինի Անա-
տօլու վիլայէթլէրինտէ էրմէնիլէ-
րէ գարշը տահա շիտտէթլի վէ
տահա տէհէթլի սուրէթտէ իճրա
իթմիշ օլտըղընա մուգապիլ, քէն-
տիսիտէ Սինապտա էվլատ ու էյա-
լընտան մահրում րուհի մէքրուհէ-
սինի էյատիի շէյաթինէ թէսլիմ
իթմիշ տիր։

—Միւրիքիւնտա եաղըտըղընա
պինաէն, Սուլթանըն հարէմէ-
րինտէն 18 գատըն կէնճ թիւրք-
լէրէ հէմէֆքէար պուլընմագ թէօհ-
մէթի իլէ տէնիլէ աթըրըշլար։
Պօղազտա իշլիյէն գարըգըրլար
վուգուի հալի անլամըշ օլմաղլէ,
պու շալէանըն ըէմալ տաիթլէրտէ
հէյէճան հուսուլա կէթիւրմիշ տիր։

ՏԱԽԻԻԹԵ

Սօֆիատա ախիթէն անթիւէ-
միսթ (հահուտիլէրէ գարշը) պիւր
փըրգա թէշթիլ օլընմըշ օլտըղը
եաղմըշ տըգ։

Թիւրիպաքի վէսքիլէքին եաղտը-
ղընա պինաէն, կէշէն հաֆթա եա-
հուտիլէր թարաֆընտան պիւր հէ-
յէթի մուրախասա տախիլիյէ նա-
ղըրը Ս. Րատսլափօֆըն նէգտինէ
կիտուպ, պաղը պուլկար կաղէթա
լարըն եահուտիլէրէ գարշը իսթի-
մալ իթմիկի լիւանտան տօլայը
նաղըրըն տըգգաթընը տալէթ վէ
իգթիլգասընը իճրապընը իսթիւր-
համ իթմիշ տիր։ Ս. Րատսլափօֆ
մէքթէր հէյէթի նէգաթէթլէ գա-
պուլ իտէրէք, արզ օլընան մէսէ-
լէտէն մալիմաթլ։ օլմատըղընա
թէէսիլֆինի պէյանլէ իգթիլգասը-
նըն իճրապընը վատ իթմիշ։ Սէգ-
թիւր կաղէթանըն իշլիթտիկինէ նա-
գարէն ախիթէն Սօֆիատա թէշ-
թիլ օլընան անթիւէթիսթ փըր-

գասընը հարէքիաթընաան տօլա-
յը տախիլիյէ նաղըրը գապթիյէ
իտարէսինտէն իգահաթ իսթէյէ-
ճէք վէ Եահուտիլէրէ գարշը հու-
սուլա գէշէն քիլու գալլէ նիհայէթ
վէրիլմէսինի էմր իտէճէք իմիշ։

—Թիւրք-Պուլկար սինօրը իւ-
զէրինտէ Մաթաֆա բաշայա եա-
զըն հարմանը գասապասը ճիվա-
րընտա հոկտ. 9տա իւշ թիւրք գա-
պիթլէր պուլկար ասքէրլէրինտէն
թուլթուլապ Ֆիլիպէյէ նաղլ օլըն-
մըշլար։ Մէրգում գապիթլէր իս-
թինթաղարընտա կէնճ-Թիւրքիա
բարթիսինէ մէնտուպ պուլընմաղլէ
թիւրքիատան գաշմայա մէճպուր
օլտըղլարընը պէյան իթմիշլէր։
Օրպիֆ նամ պուլկար կաղէթասը
պու վուգուլար կաղուպ, մէքրում
գապիթլէրին էսթիօն օլմալարընը
գանն իտիյօր։ Պուլկար հիւքիմէ-
թի անլարը Րուսչուք գաղապընտա
իսքեան իթմիլմէք իշլին վառնա-
յա եօլլամըշ օլմաղլէ էվլէթի կիւն
մէրգում թիւրք գապիթլէր շէհրի-
միլտէ կէօրիւնտիլէր։

ԶԱՄԻՐԻ ԲԻՍՅԱՍԸ

Վառնա, Հոկտեմբեր 2
Պուղսայ
Վակ. լիպրա 55-58 հէք 9-80, 9-40ֆր.
Արապա, 53-60 հէքթ. 9-50-11.20
Ֆասուլիա 100 քիլօ 12.20 ֆր.
Արքա
Լիպրա 40-44 հէքթ. 7.7-80. ֆր.
Մըսրը հօգ
Կիւնտէ 120-150 արապա վէ 10-15
վալօն պուլկապ վէ 20-30 արապա
արքա 15-20 արապա ֆասուլիա կէլ-
մէքտէ տիր։
Արապա մուամէլէսի նարօլէօն 21 ֆր.
20 օանթիմ հիսապը իլէ։

ՎԱՆԱՍՏԱՆՕՔ ՄԵՔԵՆԱԳՈՐԾ
ՎԱՌՆԱ

Ա. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ
Տրախօւմսի փողոց թիւ 1210

Ժամանակէ մը ի վեր երկրա-
գործական մեքենաներով զբաղած
ըլլալու պատճառաւ իմ մասնաւոր
գործարանս գոց կը մնար։

Այժմ կուզամ ծանուցանել թէ
ամեն տեսակ կարի մեքենաներու
համար մասնագէտ վարպետ մը
բերել տուած եմ։

Գործարանիս մէջ կը նորոգուին
նաեւ շոգեշարժ եւ ջրաշարժ մե-
քենաներ, հիժանիւններ (պիսիլէթ)
գուլպայի եւ երկրագործական մե-
քենաներ, ջրհաններ են. զորս
նորոգելէ վերջ եթէ մէկ տարուան
միջոցին աւրուին, պատրաստ եմ
վերանորոգելու։ Նոր ջրաղացներ եւ
շոգիէ աղօրիքներ նոր ինքնօր կը
հաստատենք ընտիր կերպով։

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՆԻՆԻՔ»Ի

Գրքեր, տետրակներ, հրաւիրագրեր,
տոմարներ եւ այլն կը տպագրուին ա-
մենապիւրամաշկի գնիւրով ու գոհա-
ցուցիչ պայմաններով։ Ֆրանսերէն,
յունարէն եւ պուլկարերէն փոքրիկ
գործեր եւս կը պատրաստուին։

Օտար երկիրներէ եւ ուրիշ քաղաք-
ներէ եկած յանձնարարութիւնք փու-
թով եւ ճշգիւ կը գործադրուին։

ՆՈՐ
ԵՐԳԱՐԱՆ
ԿԱՍ
ՄՐՄՈՒՆՁ ՀԱՅՎԱԿԱՆ

Կը պարունակէ այսօր ժողո-
վուրդի ամեն դասակարգէ երգուող
հին եւ նոր գրեթէ բոլոր երգերը։
Կը ծախուի ԻՐԱՆԻՆԻՔի խմբա-
գրատունը։

ԳԻՆ 1 ՖԻԱՆՔ

ՕՓԵԼ «ՔԼՈՎՏԻՎ»
ՊԱԼԵՔ ԲԱԶԱՐ Ն. 462

Վառնա
Այս պանդոկը վերջերս
մեր տնօրինութեան տակ մտած
ըլլալով իր առջի վիճակը բոլոր-
րոպին բարեփոխուած է. յաճա-
խորդները ըստ ամենայնի գոհ
կացուցանելու համար հակառակ
համեստ գներուն, մաքրութեան
մեծ հոգ ու խնամք կը տարուի։
10-4 ՅԱԿՈԲ ՄԻՆԱՍԵԱՆ

ՄՍԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Պաղատանար պաշտ Ն. 9 6

Գնիւրու արժանութեան եւ մաք-
րութեան վերջին ծայր հոգ կը
տարուի։ Տիրոջ տրամադրութեան
տակ գտնուած տղաներու միջոցաւ
յանձնարարուած մանրը յաճախոր-
դաց տները կը զրկուին։

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
ՄԻԱՆՈՑԻ ԵՒ ՆԱՄԱԿԱՐՈՒՄԻ
Նաւաւասոյցին մօտ Ն. 389

Տիրա ձիւնակիւնանի սոյն նորա-
հաստատ վաճառատան մէջ կը գտնուին
ծխախոտի եւ թղթաղորշի ամեն տե-
սակները։

Փափաքելի է որ ամեն դասակարգէ
ազգայինք հոն յաճախեն ու իրենց
գնումները Ս. գատի այդ չարչարեալ
վիտուրէն ընեն։

Կ'ՓՆՏՈՒԻՆ

Բնիկ Ակնեցի Պաղտատար Խա-
կիճեանի ճանիկ եւ Արրահամ գա-
ւակներ՝ որ երկար տարինիկէ ի վեր
Եգիպտոս կը բնակէին, կ'փրտ-
ուին իրենց ազգականներուն կող-
մէ. ուստի անոնց հապէն գիտցող
ազգայինք թող հաճին երկտողով
մը խմբագրութեաւ իմացնել։

ԲՈՒԼԻ ՔՕԼԵՔՍԻՆ

Բուլի սքանչելի քօլէքսիօն մը
ծախու հտնուած է, աւելի քան
երկու հազար բուլերով, որոնց մէջ
բաղձաթիւ հազուադիպաներ. մի-
այն ալ պիւր օւնց բուլի
կ'արժէ 50 ֆրանք, Գնել փափաքողները պիմին
խմբագրութեանս։

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. Н. Войнико